ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի, գ. Բերդաշենի և գ. Կապսի, ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, գ. Ջիլի, գ. Աղբերքի Շատջրեքի, ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի, գ. Վաղատինի և գ. Դարբասի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով 2020 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-1 պայմանագրում 2020 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

<u>Փոփոխության առաջացման պատճառ N 1</u> ՀՀ կառավարության 08.12.2020թ N1988-Ն որոշում:

<u>Փոփոխության նկարագրություն</u> ֆինանսական միջոցների նվազեցում, վճարման ժամանակացույցի փոփոխություն:

<u>Փոփոխության հիմնավորում</u> պայմանագրի 7.5 և 7.8 կետեր:

Պատվիրատու՝ ***<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտե</u>***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
28.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-1 պետական գնման պայմանագրի

ք. Երևան «18» դեկտեմբերի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և « ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.12.2020թ. N 1988-Ն որոշումը և Կողմերի միջև ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի, գ. Բերդաշենի, գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման համար 28.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-1 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<<Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 81 000 000 (ութսունմեկ միլիոն) ՀՀ դրամ, որից՝ 2020թ. համար՝ 3 180 600 (երեք միլիոն մեկ հարյուր ութսուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

- ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն – 27 000 000 (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ,
- ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն – 27 000 000 (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ, որից 2020թ. համար՝ 3 180 600 (երեք միլիոն մեկ հարյուր ութսուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ,
- ՀՀ Շիրակի մարզի գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն – 27 000 000 (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:>>:

1.2 Պայմանագրի N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջերից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՍՈՒՐԳԵՎ>>ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3	ք. Երևան, Նորք 2-րդ նրբ, տուն 2
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900011035756	Հ/Հ 1150009409879824
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 00868322
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
____________ Ա. Մկրտչյան	____________ Ա. Ադամյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
28.10.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-1 պայմանագրի
18 .12.2020 թ. կնքված N 1 համաձայնագրի

«Հավելված N2
28.10.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	հաշվեհամարը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/535	900011035756	ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	3 180 600	3 180 600	3 180 600
Ընդամենը				-	-	-	-	-	-	-	-	-	-	3 180 600	3 180 600	3 180 600

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035756
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար
Ա. Մելոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՍՈՒՐԳԵՎ>>ՍՊԸ
ք. Երևան, Նորք 2-րդ նրբ, տուն 2
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150009409879824
ՀՎՀՀ 00868322
Տնօրեն՝
Կ. Սիամյան
(ստորագրություն)
Կ.Տ.